ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2026թ.

«ՀԵՏՔ» ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿԻՑ ՏԱԹԵՎԻԿ ՃՈՒՂՈՒՐՅԱՆԻՆ
Հասցե՝ Լոռի,017, Ալավերդի, Բաղրամյան փ. 8/35,
էլ.փոստ՝ tschughuryan.tatev@gmail.com

Հարգելի տիկին Ճուղուրյան

Ի պատասխան Ձեր՝ 05.03.2026թ. թիվ 1859830 գրության տեղեկացնում եմ, որ ՀՀ Լոռու մարզում 2025 և 2026 թվականներին դպրոցաշինական ծրագրերով իականացվել և իրականացվում է թվով 21 դպրոցի կառուցում, 21 դպրոցի վերանորոգում և մեկ մարզադահլիճի վերակառուցում, որոնք ներառված են Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում:

2026 թվականի դպրոցաշինական ծրագրերով «ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման կամ հիմնանորոգման աշխատանքներ նախատեսված չեն:

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ուղղված՝ 30.12.2025թ. թիվ 01/106,3,2/11258-2025 գրությամբ ՀՀ Լոռու մարզպետն առաջարկել է քննարկել նաև «ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրումի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության 30.11.2023թ. թիվ 2093-Ն որոշման համապատասխան հավելվածներում ներառելու հնարավորությունը:

ՀՀ Լոռու մարզում 2025-2026 ուստարում մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների թիվը 61-ն է:

Այս պահին դպրոցների միավորվելու վերաբերյալ որևէ հարց չի քննարկվում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X _____

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

կատ. Ա. Մատինյան
հեռ. /0322/4-01-61